Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության պատմությունը սովետահայ պատմագրության կողմից թերի մշակված պրոբլեմներից մեկն է։ Մեր պատմաբանները այդ կարևոր և հետաքրքիր թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ եղան համեմատաբար ուշ, 50-ական թվականների կեսերին։ Դեռ 20—30-ական թվականներին տպագրվել են հանրապետության կուլտուրական շինարարության ղեկավար գործիչների՝ Աշ. Հովհաննիսյանի, Ա. Մռավյանի, Դ. Տեր-Սիմոնյանի և մյուսների մի քանի հոդվածները, ելույթներն ու զեկուցումները՝, որոնք պարունակում են լուսավորության զանազան օրգանների, բուհերի և կուլտուրայի այլ հիմնարկների գործունեության վերաբերյալ ցուցումներ և դիտողություններ։ Այդ հոդվածներում ու զեկուցումներում քննարկվում են ժամանակի կուլտուրական շինարարության պրակտիկ խնդիրները։ Այժմ դրանք պատմաբանների համար ծառայում են որպես սկզբնաղբյուրներ։ Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության պատմությունը բազմապլանային պրոբլեմ է. այն ընդգրկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են ժողովրդական կրթության զարգացումը, անգրագիտության վերացումը, բնակչության շրջանում տարված կուլտուր-մասսայական աշխատանքը, գիտության, գրականության, արվեստի զարգացումը և այլն, որոնցից յուրաքանչյուրը կարող է ինքնուրույն հետազոտության թեմա դառնալ։ Ընդսմին կուլտուրական շինարարության ամբողջական պատմությունը կարող է ստեղծվել միայն կուլտուրական հեղափոխության բոլոր կոմպոնենտների կոմպլեքսային հետազոտության դեպքում։ Դրան համապատասխան, Սովետական Հայաստանի կուլտուրական հեղափոխության պատմության մշակումը ընթանում է երկու ուղղությամբ՝ կուլտուրական շինարարության պատմության հետազոտությունը ամբողջությամբ, և այս պրոբլեմի առանձին մասերի քննարկումը։

Պատմագիտական այն գրականությունը, որտեղ քննարկվում են Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության պատմության հարցերը, կարելի է բաժանել երեք խմբի։ Առաջին խմբում են այն աշխատությունները, որոնք նվիրված են ընդհանրապես Սովետական Հայաստանի պատմությանը. երկրորդում՝ այն հետազոտությունները, որոնք լուսաբանում են Սովետական Հայաստանի պատմության առանձին ժամանակաշրջանները և, վերջապես, երրորդ խմբի մեջ մտնում են այն աշխատությունները, որոնք վերաբերում են հատկապես կուլտուրական շինարարության պրոբլեմներին։

---

1 *Տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, Պրոլետարական հեղափոխությունն ու ուսուցչությունը, Երևան, 1925։ Ասքանազ Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961։ Դ. Տեր-Սիմոնյան, Հոդվածներ, Երևան, 1961։

Առաջին խումբը՝ ներկայացված է «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» երեք պրակներով[2] և հայ ժողովրդի պատմության սովետական շրջանի վերաբերյալ ուսումնական ձեռնարկներով[3]։ «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» աշխատությունը Հանրապետության սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանի ամբողջական պատմության ստեղծման առաջին փորձն է։ Այն ընդգրկում է 1917-ից մինչև 1945 թթ. ժամանակաշրջանը, ուր ներկայացված է սոցիալիստական շինարարության պրոցեսը Հայաստանում, ցույց է տրված Հանրապետության աշխատավորների պայքարը ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության իրականացման համար. այնտեղ քննարկվում է նաև Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հարցը։ Այդ պրակների հրատարակությունը, անտարակույս, իր դերն է խաղացել Սովետական Հայաստանի պատմության գիտական պերիոդիզացիայի մշակման, սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում հայ. ժողովրդի ամբողջական գիտական պատմության ստեղծումը նախապատրաստելու գործում։

Նշված «Ուրվագծերում» ամենաընդհանուր գծերով տրված է Հայաստանի կուլտուրական շինարարության պատմությունը՝ քննարկվող ժամանակաշրջանում։ Գրքում վերլուծվում են Հայաստանի Հեղկոմի առաջին դեկրետները, որոնք վերաբերվում են կուլտուրայի ժողովրդականացմանը, հին դպրոցի վերացմանը, և դաստիարակչական նոր հիմնարկությունների ստեղծմանը, բերվում են ժողովրդական կրթության սիստեմի զարգացման մասին հիմնական տվյալները, բնութագրվում է գիտության և կուլտուրայի զարգացումը։ «Ուրվագծերում», որպես կանոն, օգտագործված են հրապարակված վիճակագրական տվյալները, Հայաստանի սովետական կառավարության կարգադրություններն ու դեկրետները։ Քանի որ կուլտուրական շինարարությունը քննարկվում է ոչ թե ինքնուրույն ձևով, այլ սոցիալիզմի կառուցման ընդհանուր կոմպլեքսում, ապա, բնականաբար, «Ուրվագծերում» չի տրված Հայաստանի կուլտուրական հեղափոխության գիտական պերիոդիզացիան, չեն բացահայտված Հայաստանի կուլտուրական հեղափոխության առանձնահատկություններն ու օրինաչափությունները և գրեթե չի խոսվում հայ ժողովրդի նոր, սոցիալիստական կուլտուրայի ստեղծման դժվարությունների մասին։ Ցափազանց համառոտ ու սխեմատիկ են ներկայացված այնպիսի կարևոր հարցեր, ինչպես, օրինակ, սովետահայ մտավորականության ձևավորումը, սոցիալիստական սկզբունքների հիման վրա հայ գրականության ու արվեստի ստեղծագործական ուժերի համախմբման համար կոմունիստական կուսակցության մղած պայքարը, կուլտուր-մասսայական աշխատանքը և այլն։ Նշված ուսումնական ձեռնարկներում տրված է սոցիալիստական ժամանակաշրջանում հայ կուլտուրայի զարգացման համառոտ ուրվագիծը, որը դասագրքի շրջանակներում ընդհանուր պատկերացում է տալիս հայկական կուլտուրայի նվաճումների մասին։

---

2 Տե՛ս Հ. Էլլիբեկյան, Ա. Հակոբյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, Առաջին պրակ, Երևան, 1954։ Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, Երկրորդ պրակ (1926—1934), Երևան, 1958։ Մ. Ադայան, Ս. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, Երրորդ պրակ (1935—1945), Երևան, 1960։

3 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», մաս III, Ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, Երևան, 1957։ «Հայ ժողովրդի պատմություն», դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան, 1963։

Երկրորդ խմբին վերաբերում են այն մենագրությունները, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի պատմության առանձին էտապներին։ Դրանցից երեքը ընդգրկում են հանրապետության պատմության նախապատերազմյան ժամանակաշրջանը։ Նշված աշխատությունների հեղինակները նպատակ ունենալով քննարկել Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման, ինդուստրացման և գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացման սկզբնական ժամանակաշրջանի ամբողջական պատմությունը, բնականաբար, կանգ են առնում նաև աշխատավորների կուլտուրական և նյութական մակարդակի բարձրացման հարցերի վրա։ Ա. Հակոբյանի և Ս. Խարմանդարյանի գրքերում բավականաչափ մանրամասն քննության է առնվում կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության գործունեությունը կուլտուրական շինարարության ասպարեզում՝ սոցիալիզմի կառուցման առաջին տարիներին։ Հեղինակները նկարագրում են հանրապետության լուսավորության և կուլտուրայի վիճակը սովետական իշխանության հաստատման պահին, ցույց են տալիս այն խոշոր աշխատանքը, որը կատարվել է աշխատավորության ակտիվ մասնակցությամբ՝ կուլտուրական շինարարության ասպարեզում, և գալիս են այն ճիշտ եզրակացությանը, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատման հենց առաջին օրերից սկսվեց կուլտուրական հեղափոխությունը։ Ունենալով կուլտուրական շինարարության պատմությունը խորազնին ուսումնասիրելու նպատակ և հիմնականում օգտագործելով հրապարակված վիճակագրական տվյալները, հեղինակները ցույց են տալիս կուլտուրական շինարարության առաջին հաջողությունները Հայաստանում։

Հայրենական մեծ պատերազմի տարիների Հայաստանի կուլտուրական շինարարությունը վեր է հանված Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հարցին նվիրված Ա. Մնացականյանի մենագրության մեջ[5]։ Հեղինակը ցույց է տալիս այն խոշոր ավանդը, որ մուծել է սովետահայ մտավորականությունը թշնամու դեմ տարված հաղթանակի գործում՝ ռազմաճակատում և թիկունքում։ Գրքում խոսվում է հանրապետությունում գիտության զարգացման, մասնավորապես Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի կազմակերպման մասին։ Նշված գրքի այն էջերում, որոնք նվիրված են պատերազմի տարիներին աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացմանը, ֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում հայ մտավորականության մասնակցության հարցերի քննարկմանը, առավել լրիվ լուսաբանվել է Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության պատմությունը։

Սոցիալիզմի կառուցումն ավարտելու և կոմունիստական հասարակության ծավալուն կառուցմանն անցնելու շրջանում հայկական կուլտուրայի զարգացման հարցերը շոշափվում են Ս. Խարմանդարյանի և Ա. Հակոբյանի մենա-

---

4 Տե՛ս Ա. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1955։ С. Хармандарян, Армянская ССР в первый год новой экономической политики. Ереван, 1955.

Վ. Ղազարյան, Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, Երևան, 1962։

5 Տե՛ս Ա. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954։

գրություններում[6]։ Հեղինակները ցույց են տալիս հայ ժողովրդի գրականության և արվեստի ծաղկումը, գիտության բուռն զարգացումը, մի բան, որը հնարավոր դարձավ նախորդ ժամանակաշրջանի կուլտուրական շինարարության զգալի հաջողությունների հիման վրա։ Պետք է նշել, որ Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության ետպատերազմյան շրջանը մեր պատմագրության կողմից ուսումնասիրված չէ. այդ պատճառով էլ կուլտուրայի զարգացմանը նվիրված նշված մենագրությունների համապատասխան մասերը հանդիսանում են սոցիալիստական և կոմունիստական շինարարության ետպատերազմյան տարիների կուլտուրական շինարարության պատմությունը լուսաբանելու առաջին փորձերը։

Ինչպես վերևում ասվեց, երրորդ խմբին են պատկանում այն աշխատությունները, որոնք նվիրված են հատկապես կուլտուրական հեղափոխության հարցերին։ Դրանց մեջ կարելի է տարբերել կուլտուրական շինարարությանը կամ նրա առանձին էտապների ամբողջական ուսումնասիրմանը և երկրորդ՝ սովետահայ կուլտուրայի ռեգիոնալ հարցերի քննարկմանը նվիրված աշխատությունները։

Առաջին ուղղությունը ներկայացված է երկու աշխատություններով, որտեղ կուլտուրական հեղափոխության հարցերի կոմպլեքսը քննարկվում է սոցիալիզմի կառուցման երկու էտապների՝ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի[7] և առաջին հնգամյակի տարիների[8] առումով։ Վ. Ղազանջյանի հետազոտությունը գրված է պատմական հարուստ նյութերի հիման վրա և ճիշտ է արտացոլում Հայաստանի կուլտուրական հեղափոխության սկզբնական շրջանի պատմությունը։ Հեղինակը ցույց է տվել հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի ստեղծման մասին կոմունիստական կուսակցության և երիտասարդ սովետական հանրապետության միջոցառումները, ժողովրդական կրթության սիստեմի կազմակերպումը Հայաստանում, անգրագիտության դեմ մղված պայքարի սկիզբը, սովետահայ կուլտուրայի առաջին օջախների ստեղծումը, կուլտուր-լուսավորական աշխատանքը և այլ հարցեր։ Այնուհետև, նշվում են կուլտուրական շինարարության դժվարությունները հանրապետությունում և աշխատավոր մասսաների մասնակցությունը կուլտուրական շինարարությանը։ Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ կուլտուրական շինարարության ասպարեզում կուսակցության և կառավարության բոլոր միջոցառումները միշտ հանդիպում էին հանրապետության աշխատավորների ամենալայն աջակցությանը։ Հենց դրանով էլ ժողովրդական մասսաները հանդես են գալիս որպես նոր կուլտուրայի կերտողներ։

Սակայն սահմանափակելով իր հետազոտությունը լոկալ ժամանակաշրջանով՝ 1920—1925 թվականներով, հեղինակը դրանով իսկ իրեն զրկել է լայն ընդհանրացումներ կատարելու, Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության առանձնահատկությունները և օրինաչափությունները լիակատար ուժով ցույց տալու հնարավորությունից։ Վ. Ղազանջյանի մենագրությունում

---

6 Տե՛ս Ս. Խարմանդարյան, Հայկական ՍՍՌ չորրորդ հնգամյակի տարիներին, Երևան, 1960, Ա. Հակորյան, Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին (1951—1955), Երևան, 1962։

7 Տե՛ս Վ. Ղազանջյան, Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964։

8 К. Худавердян. Культурное строительство в Советской Армении в годы первой пятилетки (1928—1932). Ереван, 1959.

քննարկվող ժամանակահատվածում կուլտուրական հեղափոխությունը կատարել է իր առաջին քայլերը, նրա շատ պրոցեսներ ավարտվեցին ավելի ուշ շրջանում. այդ պատճառով էլ հեղինակը ստիպված է նկարագրել սովետահայ կուլտուրայի ստեղծման ուղղությամբ կատարված մեծ աշխատանքի միայն սկիզբը, առանց այն ընդհանրացնելու։ Հասկանալի է, որ հեղինակը հնարավորություն չուներ կուլտուրական շինարարության սոցիալական հետևանքները ի հայտ բերելու, որովհետև նրա կողմից քննվող նյութը չի կարող սոցիոլոգիական կարգի եզրակացությունների հիմք ծառայել։

Նշված թերությունները, որոնք կապված են հետազոտվող ժամանակաշրջանի լոկալության հետ, վերաբերում են նաև երկրորդ աշխատությանը։

Սովետական իշխանության քառասուն տարիների հայ ժողովրդի կուլտուրական զարգացման հարցի քննարկման փորձ կատարվել է տողերիս հեղինակի հոդվածում, որը տպագրված է «Սոցիալիստական կուլտուրայի զարգացումը միութենական հանրապետություններում» ժողովածուի մեջ[9]։

Հայտնի է, որ կուլտուրայի ընդհանուր վերելքը արտացոլվել է նաև հայ ժողովրդի կենցաղում։ Այդ հարցը հետաքրքիր է նաև կուլտուրական շինարարության հետազոտողի համար։ Սոցիալիստական դարաշրջանում հայ ժողովրդի կենցաղում տեղի ունեցած փոփոխությունը առավել լրիվ կերպով քննարկում է «Կովկասի ժողովուրդները» կապիտալ աշխատությունում[10]։ Այդ աշխատության մեջ կա մի ակնարկ Հայաստանի լուսավորության և գիտության պատմության մասին։

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած կուլտուրական կապերի ուսումնասիրմանն է նվիրված Ա. Շահինյանի գիրքը[11]։ Քննարկելով Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական փոխհարաբերությունների պատմությունը, հեղինակը տարբերում է այդ պատմության երկու հիմնական ժամանակաշրջաններ՝ մինչև սովետական իշխանության հաստատումը և դրանից հետո։ Հեղինակը կարողացել է ցույց տալ, որ Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումով սկսվեց կուլտուրական փոխադարձ կապերի պատմության որակապես նոր դարաշրջան։ Կոմունիստական կուսակցությունն իր ջանքերն ուղղում էր ամենից առաջ դեպի ազգային կայուն խաղաղության հաստատումը ազատագրված երկրամասում, ընդ որում ոչ վերջին դեր էր հատկացվում Անդրկովկասի ժողովուրդների ազգային կուլտուրաների դաստիարակչական ազդեցությանը, նրանց լավագույն դեմոկրատական տրադիցիաներին։ Հեղինակը մանրամասն շարադրում է հոգևոր գործունեության բոլոր բնագավառներում (գրականություն, արվեստ, երաժշտություն, թատրոն, կինո և այլն) երեք եղբայրական հանրապետությունների ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմությունը։ Ա. Շահինյանը իրավացիորեն նշում է երկու հիմնական տենդենց Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրաների զարգացման մեջ՝ երկրամասի ժողովուրդներից յուրաքան-

---

9 *Տե՛ս* К. Худавердян, Новая культура древнего народа. (Развитие социалистической культуры в союзных республиках, *հոդվածների ժողովածու, Մոսկվա, 1962)։*

10 *Տե՛ս* «Народы Кавказа», т. II, М., 1962, Раздел «Народы Армянской ССР», главы «Семейный быт» (авторы Э. Карапетян, С. Лисицян) и «Просвещение и наука» (авторы К. Худавердян, С. Неуронова).

11 *Տե՛ս* Ա. Շահինյան, *Ուրվագծեր անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմության, Երևան, 1963։*

չյուրի ազգային կուլտուրայի ծաղկումը և նրանց փոխադարձ հարստացումն ու մերձեցումը։ Աշխատության մեջ օգտագործված են ծավալուն և հետաքրքիր նյութեր, սակայն հեղինակը ժլատություն է հանդես բերել տեսական ընդհանրացումների հարցում։ Սեղմ և միայն ընդհանուր գծերով է շարադրված ՍՍՌՄ ժողովուրդների կուլտուրաների մերձեցման ուղիներին վերաբերող բաժինը։

Կուլտուրական շինարարության ռեգիոնալ հարցերին նվիրված աշխատություններից պետք է նշել այն հետազոտությունները, որոնք նվիրված են ժողովրդական կրթության[12] և գիտության[13] զարգացման պատմությանը։ Սովետահայ գրականության և արվեստի զարգացման հարցերը քննարկվում են գրականագետների և արվեստագետների աշխատություններում. նշելով այդ հետազոտությունների մասնագիտական՝ գրականագիտական և արվեստագիտական բնույթը, պետք է նկատել, որ դրանք հետաքրքրություն են ներկայացնում և օգտակար են սովետահայ կուլտուրայի պատմաբանի համար[14]։

Լ. Ղարիբջանյանի վերջերս հրատարակված մենագրությունը, որը նվիրված է Երևանի պետական համալսարանի պատմությանը, հանդիսանում է հանրապետության այդ հնագույն բարձրագույն ուսումնական հաստատության պատմության լուսաբանման առաջին միակ և հաջողված փորձը[15]։

Վերջապես, սովետահայ կուլտուրայի հարցերին են նվիրված մի շարք գիտա-մասսայական բնույթի աշխատություններ, որոնց մեջ լուսաբանվում են հայկական սոցիալիստական կուլտուրայի հիմնական նվաճումները[16]։

Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության պատմության հարցերի վերաբերյալ պատմագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ կարևոր և հետաքրքիր պրոբլեմի մշակման ասպարեզում կատարվել են միայն առաջին քայլերը։ Անհրաժեշտ է ընդհանրացնել Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության փորձը, որը թույլ կտա լիովին բացահայտելու կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության վերափոխիչ մեծ դերը հայ ժողովրդի ճակատագրում, ժողովուրդ, որն իր ազգային վերածննդին հասավ սոցիալիստական հասարակության հիման վրա։

Անհրաժեշտ է ստեղծել հանրապետության կուլտուրական շինարարության ամբողջական պատմությունը։ Ընդսմին պետք է հատուկ ուշադրություն դարձնել մի շարք հարցերի վրա, որոնք մինչև այժմ չեն լուսաբանվել մեր պատմագիտական գրականության մեջ։ Դրանց թվին պետք է դասել կուլտուրական հե-

---

12 Տե՛ս Ա. Աբրահամյան, Ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում, Երևան, 1959։

13 Տե՛ս Վ. Համբարձումյան, Գիտությունը Հայաստանում 40 տարում, Երևան, 1960։

14 Նշենք այս ասպարեզի առավել խոշոր ընդհանրացնող աշխատությունները. Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1961։ Սովետահայ գրականության տարեգրություն, Երևան, 1957։ Ս. Մելիքսետյան, Ակնարկ սովետահայ թատրոնի պատմության, Երևան, 1960։ Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, 1963։ Ակնարկ հայ կերպարվեստի պատմության, Երևան, 1961։ Սովետահայ կինոարվեստը, Պրակ 1, Երևան, 1958, Պրակ 2-րդ, Երևան, 1960։

15 Տե՛ս Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը, Երևան, 1965։

16 Տե՛ս А. Шагинян, Культура Советской Армении, Ереван, 1955; А. Шагинян, Культура возрожденного армянского народа, Ереван, 1959.

Ա. Շահինյան, Ազատագրված ժողովրդի կուլտուրան և արվեստը, Երևան, 1959։ Գ. Խաչատրյան, Հ. Հարությունյան, Սովետահայ կուլտուրան սոցիալիզմի նվաճում է, Երևան, 1960։ Գ. Խաչատրյան, Կոմունիզմը և կուլտուրան, Երևան, 1962։

ղափոխության պատմության պերիոդիզացիայի գիտական մշակումը, սովետահայ կուլտուրայի և սփյուռքահայ կուլտուրայի փոխհարաբերության և փոխազդեցության հարցը, կուլտուրական շինարարության ազդեցությունը հանրապետությունում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունների վրա։ Ավելի մանրամասն պետք է լուսաբանել սովետահայ մտավորականության ձևավորման պրոցեսը, ինչպես նաև հանրապետության խոշորագույն բուհերի պատմությունը։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայաստանում կատարված կուլտուրական հեղափոխության օրինաչափությունների և առանձնահատկությունների հարցը, որը մեր պատմագիտական գրականության մեջ մինչև այժմ իր արժանի լուսաբանումը չի գտել։ Հանրապետության կուլտուրական շինարարության պատմության ուսումնասիրությունը, կուտակված փաստերը ներկայումս թույլ են տալիս ի հայտ բերել Սովետական Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Մանրամասն կանգ առնենք այդ հարցի վրա։

Սովետական Հայաստանի կուլտուրական հեղափոխությունը հանդիսանում է ՍՍՌՄ-ում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության բաղկացուցիչ մասը։ Այդ նկատառումով էլ նրան հատուկ են ՍՍՌՄ սոցիալիստական կուլտուրայի զարգացման ընդհանուր օրինաչափությունները։ Միության բոլոր հանրապետություններում տեղի ունեցած կուլտուրական շինարարության հիմքում ընկած էին միևնույն սկզբունքները, կատարվում էին նույնանման պրոցեսներ, լուծվում էին այնպիսի խնդիրներ, որոնք իրենց ընդհանրությամբ բնորոշ էին ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների համար։ Բայց քանի որ ՍՍՌՄ ժողովուրդները գտնվում էին կուլտուրական զարգացման տարբեր մակարդակների վրա, իսկ նրանց զարգացման պատմական ընթացքն ուներ իր յուրահատկություններն ու տարբերությունները, ապա կուլտուրական հեղափոխությունն էլ ազգային հանրապետություններում պետք է անխուսափելիորեն ունենար իր տարբերություններն ու ուրույն ձևերը, որոնք բնորոշ են յուրաքանչյուր ժողովրդի և նրա կուլտուրայի համար։ Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ազգային հանրապետություններում կատարված կուլտուրական հեղափոխության պրոցեսում ընդհանուր օրինաչափությունները իշխում են ազգային առանձնահատկությունների և ուրույն ձևերի վրա. կուլտուրական հեղափոխության օրինաչափությունները առաջատար դեր են խաղում և պայմանավորում այդ ամբողջ պրոցեսը։

Կուլտուրական հեղափոխության կարևորագույն օրինաչափությունը նրա իսկական ժողովրդական բնույթն է։ Դա նշանակում է, որ կուլտուրական հեղափոխությունը կատարվել և կատարվում է ժողովրդի ձեռքով. ժողովուրդը նոր կուլտուրայի ստեղծողն է։

Հայ ժողովրդի ամենալայն խավերը խորը և ճիշտ ընկալեցին կուլտուրական հեղափոխության լենինյան գաղափարը, ջերմորեն պաշտպանեցին այն, ամենալայն մասնակցություն հանդես բերին կուլտուրական հեղափոխության խնդիրների իրականացման ժամանակ։ Ժողովուրդը տեսնում էր, որ ստեղծվում է նոր կուլտուրա, որը ոչ թե գաղափարական ներգործման գործիք է շահագործող դասակարգի ձեռքում, այլ բոլորի կուլտուրան է, իսկական ժողովրդական կուլտուրա։ Կուլտուրայի ասպարեզում կոմունիստական կուսակցության քաղաքականության մեջ հայ ժողովուրդը տեսնում էր անցյալի իր լավագույն մտածողների գաղափարների մարմնացումը, ագահորեն ձգտում էր դեպի

դիտելիքները, աշխատում էր լիովին օգտագործել կուլտուրական մակարդակի բարձրացման ընձեռված հնարավորությունները։ Դա իր արտահայտությունը գտավ կուլտուրական շինարարության ասպարեզում կուսակցության և կառավարության բոլոր միջոցառումներում մասսաների հանդես բերած ամենաակտիվ մասնակցության մեջ։

Դժվար էր պատկերացնել, թե կհաջողվեր Հայաստանի չափահաս բնակչության մասսայական անգրագիտությունը վերացնել և այն էլ այնքան կարճ ժամկետում, եթե չլիներ ժողովրդական մասսաների վիթխարի ցանկությունը՝ վերջ տալու անցյալի այդ ժառանգությանը, եթե չլիներ նրանց համար պահանջները անգրագիտության վերացման տեմպերն ուժեղացնելու վերաբերյալ։ Հայտնի է, որ անգրագիտության վերացումը կատարվեց սովետական հասարակայնության կողմից անվարձահատույց աշխատանքի հիման վրա՝ «Կորչի անգրագիտությունը» ընկերության գործունեության, ինչպես նաև անցկացվող կուլտուրական արշավներին մասնակցելու միջոցով և այլն։ Անգրագիտության վերացման ֆոնդում միջոցներ հավաքելուց մինչև դպրոցական շենքերի շինարարությանը գյուղացիների մասնակցությունը՝ ահա այսպիսին են կուլտուրական շինարարության ասպարեզում ժողովրդական մասսաների ստեղծագործական ինքնագործունեության սահմանները։

Հանրապետությունում ծավալված կուլտուրական շինարարության մեջ Հայաստանի ժողովրդական մասսաների ակտիվ մասնակցությունը հաստատեց Վ. Ի. Լենինի կանխատեսությունը ժողովրդական մասսաների անխուսափելի զարթոնքի և գիտելիքների ու կուլտուրայի նկատմամբ նրանց ձգտումների մասին։ Կուլտուրայի նկատմամբ ժողովրդի հենց այդ ձգտման մեջ էր տեսնում Վ. Ի. Լենինը կուլտուրական հեղափոխության հիմնական պայմանը։ «Մասսաների ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը,— մատնանշում էր Վ. Ի. Լենինը, — ստեղծում է այն առողջ հողը, որի վրա կաճեն հզոր, անրսպառ ուժեր արվեստի, գիտության և տեխնիկայի զարգացման համար... Պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելու ժամանակից ի վեր ամենակարևորը կուլտուրական հեղափոխության համար արդեն կա՝ դա մասսաների զարթոնքն է, ձգտումը դեպի կուլտուրան»[17]։

Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության մյուս օրինաչափությունը՝ այդ պրոցեսի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության ղեկավարությունն է։ Կուլտուրական հեղափոխությունը մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասն է։ Իրականացնելով այդ պլանը, կոմունիստական կուսակցությունը ղեկավարում էր ինդուստրացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը և կուլտուրական հեղափոխությունը։ Հմտորեն ղեկավարելով մասսաների ստեղծագործական ակտիվությունը, կուսակցությունը դաստիարակում էր ժողովրդին, նրա մեջ տարածում իր դաղափարախոսությունը, նշում կուլտուրական հեղափոխության հիմնական խնդիրները և դրանց լուծման ուղիները։ Կուլտուրական հեղափոխության ոչ մի բնագավառ չէր կարող գտնվել և չէր գտնվում կուսակցության քաղաքականությունից դուրս։ Հանդես գալով կուլտուրական շինարարության ասպարեզում դեկրետավորման մեթոդների դեմ, Վ. Ի. Լենինը, դրա հետ միասին, մատնանշում էր կուլտուրական հեղա-

[17] См. К. Цеткин, О Ленине, Сборник статей и воспоминаний, М., 1933, стр. 33.

փոխության պրոցեսը ղեկավարելու անհրաժեշտությունը, նշելով կուսակցության վճռական դերն այդ գործում։ Ինչպես ՍՍՌՄ-ում, այնպես էլ Հայաստանում կուլտուրական շինարարության բնագավառի բոլոր հիմնական միջոցառումները մշակվել և իրականացվել են կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության համագումարներում բազմիցս քննարկվել են կուլտուրական շինարարության հարցեր, նշվել հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի հետագա զարգացման միջոցառումները։ Կուսակցությունը ղեկավար դեր է կատարել կուլտուրական հեղափոխության ժամանակաշրջանում թույլ տրված սխալների հաղթահարման գործում։ Առաջնորդվելով գրականության կուսակցականության մասին Վ. Ի. Լենինի ուսմունքով, կոմունիստական կուսակցությունը ղեկավարել է հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի և արվեստի ձևավորման պրոցեսը։ Այդ ղեկավարության շնորհիվ համախմբվեցին հայ գրականության և արվեստի ստեղծագործական ուժերը նոր գաղափարական հիմքերի վրա, հաղթահարվեց հայ ժողովրդի կուլտուրական ժառանգության նկատմամբ եղած սխալ վերաբերմունքը։

Կուլտուրական հեղափոխության ղեկավարումը կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության կողմից, ժողովրդական մասսաների՝ կուլտուրայի այդ ստեղծողների ակտիվության հետ միասին, հանդիսացավ Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության հաջողության գրավականը և անհրաժեշտ պայմանը։

Վերջապես, Սովետական Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության երրորդ օրինաչափությունը՝ սովետահայ կուլտուրայի զարգացումն է մյուս սոցիալիստական ազգերի կուլտուրաների սերտ միասնության մեջ։

Այս օրինաչափությունը նույնպես հատուկ է ամբողջությամբ վերցրած ՍՍՌՄ-ում կատարված կուլտուրական հեղափոխությանը։ Սոցիալիստական կուլտուրան հիմնվում է ինտերնացիոնալ միասնության վրա, որը պայմանավորված է Սովետական Միության բոլոր ժողովուրդների քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմքերի ընդհանրությամբ։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրան հանդիսանում է ամբողջ սովետական կուլտուրայի բաղկացուցիչ մասը. իր բովանդակությամբ լինելով սոցիալիստական, նա տարբերվում է ուրիշ սոցիալիստական կուլտուրաներից իր ազգային ձևով։

Մյուս սոցիալիստական կուլտուրաների հետ հայկական սոցիալիստական կուլտուրայի ընդհանրությունը պայմանավորված է նաև սովետական ժողովուրդների աշխարհայացքի ընդհանրությամբ, նրանց գաղափարական ձգտումների և նպատակների ընդհանրությամբ։ Հենց դրանում է արտահայտվում հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի միասնությունը մյուս սոցիալիստական ազգերի կուլտուրաների հետ։

ՍՍՌՄ ժողովուրդների սոցիալիստական կուլտուրայի զարգացման հիմնական տենդենցներից մեկը՝ մերձեցման և փոխադարձ հարստացման տենդենցը, դրսևորվել է դեռևս սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիներին։ Այդ ժամանակի առումով դեռևս վաղ է խոսել բոլոր սոցիալիստական ազգերի կուլտուրաների փոխադարձ ազդեցության մասին. կարելի է նկատել ռուսական սովետական կուլտուրայի ազդեցությունը մյուս կուլտուրաների վրա. մի երևույթ, որը լիովին օրինաչափ է և պատմականորեն պայ-

մանավորված։ Բայց կուլտուրաների փոխադարձ հարստացման տենդենցը արդեն ի հայտ է եկել, և նրան վիճակված է ընդլայնվել և ուժեղանալ հետագայում, հատկապես կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, երբ կարելի է խոսել ոչ միայն մյուս սոցիալիստական կուլտուրաների վրա ռուսական կուլտուրայի ունեցած ազդեցության մասին, այլև մեր երկրի բոլոր ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացման և մերձեցման էլ ավելի ուժեղ կերպով դրսևորվող պրոցեսի մասին։ «Սոցիալիստական ազգերի զարգացման պատմական փորձը ցույց է տալիս,— ասված է ՍՄԿՊ ծրագրի մեջ,— որ ազգային ձևերը չեն քարանում, այլ կերպարանափոխվում, կատարելագործվում և մերձենում են միմյանց, ազատվելով հնացած այն ամենից, ինչը հակասում է կյանքի նոր պայմաններին։ Զարգանում է բոլոր սովետական ազգերի համար ընդհանուր ինտերնացիոնալ կուլտուրան։ Յուրաքանչյուր ազգի կուլտուրական գանձարանը ավելի ու ավելի է հարստանում ինտերնացիոնալ բնույթի ստեղծագործություններով»[18]։

Այսպիսին են Սովետական Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության հիմնական օրինաչափությունները։

Անցնելով Հայաստանում կատարված կուլտուրական հեղափոխության առանձնահատկություններին, նշենք, որ դրանք պայմանավորված են հայ ժողովրդի պատմական զարգացմամբ, հանդիսանում են ազգային այն առանձնահատուկը, որը տարբերում է Հայաստանում կատարված կուլտուրական հեղափոխության պրոցեսը մյուս հանրապետություններում տեղի ունեցած նույնանման պրոցեսներից։

Կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում սկսվել է, ինչպես հայտնի է, 1920—1921 թթ., երբ Սովետական Ռուսաստանում արդեն կուտակվել էր կուլտուրական շինարարության ավելի քան երեք տարվա փորձ։ Այդ արժեքավոր փորձի օգտագործումը, Սովետական Ռուսաստանի օգնությունը հանդիսանում են Սովետական Հայաստանի կուլտուրական հեղափոխության կարևոր առանձնահատկությունը։

Կուլտուրական հեղափոխության ամենադժվար էտապում, որը սկսվեց երկրի լիակատար քայքայման պայմաններում, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը իրենց առջև ունեին Սովետական Ռուսաստանի օրինակը, ստանում էին նրա օգնությունը, որը, անկասկած, շատ բանով թեթևացրեց կուլտուրական հեղափոխության խնդիրների լուծումը հանրապետությունում։ Հայաստանում կուլտուրական հեղափոխության բնագավառում սովետական իշխանության իրագործած առաջին միջոցառումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ այդ գործում որպես ուղենիշ ծառայում էին Սովետական Ռուսաստանի կուլտուրական շինարարության մեջ արդեն իրականացված հիմնադիր միջոցառումները։ Վերջապես, Սովետական Ռուսաստանի տնտեսական և ֆինանսական օգնությունը Հայաստանին՝ սովետական իշխանության առաջին տարիներին, նույնպես մեծ նշանակություն ունեցավ կուլտուրական շինարարության հարցերի հաջող լուծման համար։

Կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում նպաստեց հայ ազգի կոնսոլիդացման պրոցեսին։ Դա նույնպես Հայաստանի կուլտուրական հեղափոխության առանձնահատկությունն է։ Հայտնի է, որ հայ ժողովրդի

---

18 Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը, Հայպետհրատ, 1961, էջ 138։

պատմական զարգացման բերումով, նրա մի մասը ցրվեց ամբողջ աշխարհով մեկ, և ապրում է Հայրենիքից հեռու։ Դաշնակների բուրժուական հանրապետությունը ի վիճակի չեղավ խթանելու հայ ազգի կոնսոլիդացման պրոցեսը։ Միայն սովետական իշխանությունը, վերացնելով հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման վտանգը, ձեռնարկելով երկրի տնտեսական վերածնության գործը, դրեց հայ ժողովրդի կոնսոլիդացման պրոցեսի սկիզբը։ Այդ պրոցեսում ոչ պակաս կարևոր դեր խաղաց և խաղում է կուլտուրական շինարարությունը։ Հարազատ կուլտուրայի և լեզվի ազատ զարգացման, կրթություն ստանալու հնարավորությունը արտասահմանյան հայ զանգվածներին ձգում է դեպի Սովետական Հայաստան, որտեղ գոյություն չունի ազգաձուլման և ազգային ինքնատիպության կորստի վտանգ։ Կոնսոլիդացիայի պրոցեսը սկսվեց սովետական իշխանության առաջին իսկ օրից։ Երբ Ռուսաստանից և ուրիշ երկրներից սկսեցին Հայաստան գալ մասնագետներ, գիտության, գրականության և արվեստի գործիչներ — դա արդեն այդ պրոցեսի արտահայտությունն էր։ Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիներին և հատկապես պատերազմից հետո սովետական կառավարությունը կազմակերպեց արտասահմանյան հայերի հայրենադարձություն։ Հայրենիք վերադարձող հայերի համեմատական սակավաթվությամբ հանդերձ այդ հայրենադարձությունը նույնպես հանդիսանում է կոնսոլիդացման պրոցեսի շարունակությունը։ Սովետահայ կուլտուրայի ծաղկումը, հայ ժողովրդի վիթխարի նվաճումները լուսավորության, գիտության և արվեստի բնագավառում մեծ ազդեցություն են գործում արտասահմանյան հայերի կողմնորոշման վրա, նպաստում են հայ ազգի կոնսոլիդացման պրոցեսի հետագա զարգացմանը։

Հայկական սոցիալիստական կուլտուրայի զարգացումը իր ազդեցությունն է գործում սփյուռքահայ կուլտուրայի մեջ դեմոկրատական տարրերի ուժեղացման վրա։ Հայաստանի կուլտուրական հեղափոխության այս առանձնահատկությունը դրսևորվեց սովետական իշխանության առաջին իսկ տարիներին, իսկ այժմ այն ունի ընդլայնվելու և խորանալու տենդենց։

Այստեղ պետք է նշել, որ սփյուռքի կուլտուրայի զարգացումը, հատկապես նրա դեմոկրատական տարրերի ձևավորումը տեղի են ունենում բարդ պայմաններում։ Ինչպես կապիտալիստական հասարակության ամեն մի կուլտուրայում, նույնպես և սփյուռքահայ կուլտուրայում կան դեմոկրատական կուլտուրայի տարրեր։ Այդ տարրերի վրա ներգործում են այն երկրների դեմոկրատական ուժերը և դեմոկրատական կուլտուրան, որտեղ գտնվում են հայկական գաղութները։ Եվ վերջապես, ինչպես ասվեց, սփյուռքահայ կուլտուրայի դեմոկրատական տարրերի զարգացման վրա գնալով էլ ավելի գործուն ազդեցություն է թողնում սոցիալիստական հայկական կուլտուրան։ Սփյուռքի և Սովետական Հայաստանի կուլտուրական կապերը ունեցել են զարգացման մի քանի էտապներ։ Եթե 1920-ական թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ակտիվ աշխատանք էր տանում արտասահմանյան հայերի նկատմամբ, ձգտելով պրոպագանդել Սովետական Հայաստանի նվաճումները և ներգործել սփյուռքի հայերի քաղաքական կողմնորոշման վրա, ապա հետագայում, անձի պաշտամունքի ժամանակաշրջանում, թուլացան կապերը նրանց առաջադիմական կազմակերպությունների և կուլտուր-լուսավորական հիմնարկությունների հետ։ Նոր էտապ սկսվեց ՍՄԿՊ XX համագումարից հետո։ Այժմ սովետահայ կուլտուրան գնալով էլ ավելի ուժեղացող ազդեցություն է գործում

սփյուռքահայ առաջադիմական կուլտուրայի վրա։ Հայ ժողովրդի այդ երկու կուլտուրաների միջև եղած կապերը դարձել են կայուն, գործուն և նպաստում են մեր ժողովրդի կուլտուրական զարգացմանը։

Վերջապես, Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության ևս մեկ առանձնահատկությունը, որը կարելի է համարել գլխավոր առանձնահատկություն, դա այն հանգամանքն է, որ հայ կուլտուրայի հաջող զարգացման հետևանքով Սովետական Հայաստանը դարձել է համայն հայ ժողովրդի հոգևոր կյանքի ճանաչված կենտրոնը։

Կարևորությունը այդ առանձնահատկության, որը կարելի է համարել անցյալ տարիներին հայ ժողովրդի կուլտուրական զարգացման գլխավոր արդյունքը, կայանում է նրանում, որ մինչև սովետական իշխանության հաստատումը հայ ժողովուրդը, ըստ էության, չուներ իր հոգևկան կյանքի կենտրոնը, կուլտուրայի կենտրոնը։

Հայտնի է, որ հայ ժողովրդի զարգացման պրոցեսի յուրօրինակությունը իր կնիքն է թողել նաև հայկական կուլտուրայի զարգացման վրա։ 19-րդ դարի սկզբին, հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո պարզորոշ կերպով նշմարվեցին հայկական կուլտուրայի երեք հիմնական կենտրոններ՝ Թիֆլիսը և Մոսկվան արևելյան հայերի համար, և Պոլիսը՝ արևմտյան հայերի համար։ Եթե արևելահայերի կուլտուրական կյանքը զարգանում էր սերտորեն առնչված ռուսական կուլտուրայի հետ, ապա արևմտահայերի կուլտուրան իր վրա կրում էր արևմտաեվրոպական կուլտուրայի գերակշիռ ազդեցությունը։ Արևմտահայկական կուլտուրային անուղղելի հարված հասցրին թուրքական շովինիստները, որոնք իրագործեցին Արևմտյան Հայաստանի բնակչության գենոցիդը։ Պատմական Հայաստանի այն տերիտորիան, որտեղ 1920 թ. հաստատվեց սովետական իշխանություն, հայկական կուլտուրայի կենտրոն չէր։ Սովետական իշխանության մեծագույն ծառայությունը հայ ժողովրդին կայանում է մասնավորապես նրանում, որ կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը դարձավ հայ կուլտուրայի կենտրոն, որտեղ իրենց զարգացումը ստացան հայ ժողովրդի գրականությունը, լեզուն, արվեստը։ Այժմ Սովետական Հայաստանին են հառված աշխարհի բոլոր հայերի հայացքները։ Ի դեմս Սովետական Հայաստանի արտասահմանյան հայերը տեսնում են իրենց Հայրենիքը, որը կարողացել է հասնել ազգային վերածնության և աչքի ընկնող հաջողությունների՝ հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրայի զարգացման ասպարեզում։

К. С. ХУДАВЕРДЯН

ПРОБЛЕМА ИСТОРИИ КУЛЬТУРНОЙ РЕВОЛЮЦИИ В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Резюме

История культурной революции в Советской Армении принадлежит к числу наименее разработанных в советской армянской историографии проблем. Советские армянские историки приступили к исследованию этой важной и интересной темы лишь в последнее время, с середины 50-х годов.

В предлагаемой статье дан обзор научной исторической литературы, созданной за прошедшее время по общим и составным вопросам истории культурной революции в Советской Армении. Автор стремился определить основные тенденции исследования истории культурной революции республике, показать пробелы и недостатки в разработке указанной проблемы. Считая основным пробелом армянской советской исторической литературы по вопросам истории культурной революции то обстоятельство, что в нашей историографии до сих пор не рассмотрены закономерности и особенности истории культурной революции в Советской Армении, автор в конце статьи останавливается на этом важном вопросе.